ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1965 Общественные науки

Ռ. Ե. Փուտմանյան

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՎ ՓՈՔՐ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայոց Մեծ թվականը շարժական տոմար է, այսինքն այդ օրացույցով տարին պարունակելով 365 օր, յուրաքանչյուր քառամյակում մեկ օրով շուտ է սկսվում։ Հուլյան 1460 տարվա ընթացքում հայկական տոմարի տարեսկիզբը անցնելով տարվա բոլոր օրերով, մի ամբողջ շրջան է կատարում։ Թե ի՞նչու հայոց Մեծ թվականի առաջին տարվա տարեմուտը համարվում է հուլիսի 11-ը, այդ մասին կան տարբեր կարծիքներ։ Հ. Բաղալյանը մի կողմ թողնելով հուլիսի 11-ից սկսվելը, հայոց Մեծ թվականի սկզբնավորության մասին նշում է հետևյալը. «Վեցերորդ դարի կեսին նոր թվական սկսելը, մեր կարծիքով, պետք է հիմնականում կապված լիներ իր ժամանակի համար խոշոր նշանակություն ունեցած որևէ պատմական, քաղաքական կամ դավանաբանական իրադարձության հետ։ Ընդ որում անհավանական չէ, որ նոր թվագրության սկսելը կարող էր առնչված լինել հայ և քաղկեդոնական եկեղեցիների դավանաբանական վեճերի սրման հետ»։ Որոշ հեղինակներ այդ տարեմուտը համարում են հին հայկական շարժական տոմարի օրինական շարունակություն և Մեծ թվականի առաջին տարվա տարեմուտը հուլիսի 11-ն ընկնելը համարում միանգամայն պարզ ու անվիճելի։ Մյուսներն այն համարում են Անդրիաս Բյուզանդացու տոմարական աղյուսակները շարունակելու օր։ Երրորդները ընդհանրապես այդ մասին լռում են։

Շատ ավելի մեծ վեճերի առիթ է հանդիսացել այն պրոբլեմը, թե ի՞նչու հայոց տոմարը անշարժ դարձնելիս, Հովհաննես Սարկավագը նավասարդի մեկը, որն այդ ժամանակ ընկնում էր փետրվարի վերջին, տեղափոխեց օգոստոսի 11-ը։ Ռ. Աղանյանն այն բացատրում է հետևյալ կերպ. իբր պատմագիրներն ասում են, որ հայոց թվականը սկիզբ է առել մեզանից 4386 տարի առաջ (այսինքն 4386—1894=2492 թ. մ. թ. ա.) հայոց նավասարդի 1-ին, կամ հռոմեական տոմարով օգոստոսի 11-ին, երբ հայոց նահապետ Հայկը Բելին սպանելով, հրամայում է այդ օրը համարել տարեգլուխ ու այն ամեն տարի տոնել[2]։

Մ. Օրմանյանն էլ տարակուսանքով գրում է. «Բայց չենք գիտեր թէ ինչ ձևով (Հովհաննես Սարկավագը) նավասարդի մեկը հասցրել է փետրվարի 29-ից մինչև օգոստոսի 11 տարին, ինչ որ Հայկա շրջան կոչված 1460 տարիներու գրութեանն»[3]։

Ըստ Ն. Ակինյանի, այդ տեղափոխումը կատարվել է կամայականորեն. «Հովհաննես Սարկավագ վարդապետի հավասարակշռությունը, որ կամայական է և չէ հենցած տոմարագիտական ոևէ հիման վրա»[4]։ Կիրակոս Գանձակեցին էլ ուղղակի սահմանափակվում է նշելով, որ Հովհաննես Սարկավագը հայոց շարժական տոմարը դարձրեց անշարժ[5]։

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն էլ Շիրակացու կազմած տոմարի անշարժության մասին է խոսում. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց և հրամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել զքրոնիկոնն հրաշազան, յորում զտոմարս մեր կարգեաց անշարժ։ Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զքրոնիկոնն՝ և վաճառի կացեալ յաթոռն ամս Զ»[6]։

Ղ. Ալիշանը տարբերում է երկու տիպի տարեգլուխներ՝ բնական և քաղաքական. ընդ որում դրանցից առաջինն սկսվել է գարնանային դիշերահավասարի օրից, իսկ քաղաքականը այժմ սկսվում է օգոստոսի մեջ. «Առաջինն նաւասարդ, որ երկու կերպ տարեգլուխ դնելով, բնական և քաղաքական, ըստ ետնոյս՝ այժմու օգոստոս ամսոյ մեջ սկսի, ըստ առաջնոյն ի մարտի

---

1 Հ. Բաղալյան, Հայոց տոմարի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 4 (23), 1963, էջ 72։

2 Տե՛ս Գ. Աղանյանց, Տոմար եւ տօնացոյց Հայաստանեաց..., Տփխիս, 1894։

3 Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1308։

4 «Հանդէս ամսօրեայ», 1947, 3, էջ 173։

5 Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 113։

6 Ստեփանոս Տարոնեցի, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 99։

հաստաբեհաՀին կում ի գարնանամրտի. և այն ատեն ամսոյ շարքն այլ շրջելով՝ Արեգ Կ՚ոլ-ոյ (և պատշաճապէս) տարեկոյ առաջին ամիս»[7]:

Գ. Կոստանդյանը գրում է, որ Մովսես Եղվարդեցի կաթողիկոսը 552 թվականից «ինչ ինչ խանգարմունքները ուղղել տալով՝ նոր թուական սահմանեց»[8]: Այդ մասին ավելի մանրամասն է կանգ առնում Ս. Դեռնին. «Երբ Փրկչի 551 թուին լրացաւ բոլոր քրիստոնեայ ազգաց համար սահմանուած երկուհարիւրամեայ զատկի շրջանը, զոր սահմանած էր Բիզանդացի ոմն Անդրէաս աստղաբաշխ տօմարագէտն՝ զատկական լուսնի լրումն անսխալ գտնելու համար, որի առաջին տարին Զատկի լուսնի լրումն ապրելի 4-ին էր. վերջի 200-րդ տարին՝ 552-ին՝ մարտի 25-ին եւ 553-ին կրհանդիպէր ապրել 13-ին, փոխան ապրել 4-ին. շեղվում էր եւ տակաւին 9 տարուց յետոյ պիտի պատահէր ապրելի 4-ին, որով Տէրունական տօներն սկսեցին խառնուել: Ուստի Մովսէս Բ. կաթողիկոս Եղուարդեցի ժողով կազմեց Դուին քաղաքում Տարօնեցի տօմարագէտ Աթանասի կարգած տոմարն ընդունել, զոր իւր հրամանով կարգած էր. միայն ինեամեայ սխալն ուղղելու համար»: Եվ այնուհետև՝ «Մովսէս Բ-ի կարգած թուականից 10 տարի յետոյ 562 թուին Աղեքսանդրացի հմուտ աստղաբաշխ էաս սահմանեց 532 տարուց շրջան: ...Աբրահամ Ա. կաթողիկոս 594 թուին անտարակուսելի եւ հաստատուն համարելով էասի սահմանած այս շրջանը, ընդունեց ինչպես բոլոր քրիստոնեայ ազգերը ընդունած էին... Փրկչի 1116 թուին սարկավագ մականունեայ Յովհաննէս վարդապետ նկատելով Մովսէս Բ-ի սահմանած տոմարի թերութիւնն, որ յառաջ էր գալիս նահանջ տարի չընդունելուց, ընդունեց յուլիան տոմարի համաձայն նահանջ տարի: ...Եւ նաւասարդի 1-ը անշարժապէս օգոստոսի 11-ին, սրբոց ճառերն Յայսմաւուրքում մի եւ նոյն օրը կարդալու համար: Այս եկեղեցական տարին կոչվում է Յայսմաւուրաց տարի, որ աւելի ուղիղ է քան Մովսէս Բ-ին, եւ ցարդ անշարժ»[9]:

Անանիա Շիրակացին խոսելով հնում ընդունված լուսնական տոմարի մասին, ոչ մի խոսք չի ասում օգոստոսի 11-ից սկսվելու վերաբերյալ, այլ սահմանափակվում է նրանով, որ Ադամից մինչև Մովսես բոլոր ազգերի մոտ որպես տարեմուտ ընդունվել է գարնանամուտը, ամիսները անուններ չեն ունեցել, այլ հաշվվել են գարնանից ըստ լուսնային ամիսների:

Հայկական հեթանոսական տարվա ամանորը գարնանային դիշերահավասարի օրը տանելու մասին է նշում նաև Ագաթանգեղոսը[10]:

Ըստ Լ. Սեմյոնովի Հովհաննես Սարկավագի կողմից տարեսկիզբը օգոստոսի 11-ը ընդունելը կապվում է այն բանի հետ, որ իբր դա հենց ներկայացնում է հեթանոսական հայկական թվականության առաջին տարվա տարեսկիզբը: Այդ մասին նա գրում է. «Երկնակամարի ամենադեղեցիկ համաստեղությունը, որը շատ ուրիշ ազգերի կողմից անվանվում է Օրիոնի համաստեղություն, նվիրված էր հայ առասպելական նախահայր և հերոս Հայկին և այդ համաստեղությունը կոչվում էր «Հայկ»: Այդ համաստեղությունը շատ մոտ էր գտնվում Մեծ շան համաստեղությանը, որի գլխավոր աստղը Սիրիուսը կամ Սոթիսն է: Եվ եթե առաջին հազարամյակում մեր թվականությունից առաջ Սոթիսի հելիոտիկ ծագումը տեղի էր ունենում հուլիսի 19-ին, ապա նույնը Հայկի համաստեղության համար տեղի էր ունենում օգոստոսի 11-ին»[11]: Որոշ հեղինակներ, հետագայում, չխորանալով աստղագիտական հաշվումներում, Լ. Սեմյոնովի տեսակետը, անհիմն կերպով, ընդունել են որպես անհերքելի փաստ:

Որ այս հաշվումը Օրիոնի համաստեղության համար սխալ է կատարված, դրանում հեշտ կարելի է համոզվել, եթե Օրիոնի (մասնավորապես նրա ամենապայծառ աստղի՝ Բետելգեյզեի) կոորդինատները որոշենք մեր թվականությունից 500—1000 տարի առաջ. այն է՝ նրա ժամանակակից կոորդինատներից հանենք սեփական շարժման և պրեցեսիայի դումարի արտադրյալը անցած ժամանակամիջոցում, և ապա սֆերիկ եռանկյունաչափական հանրահայտ բանաձևերով գտնենք, թե որ ամսին ու ամսաթվին է այն ծագում արևածագից անմիջապես առաջ: Այդ նույն արդյունքին կհասնենք նաև, օգտվելով Ֆ. Դինցելի կազմած հանրահայտ աղյուսակներից[12]: Այստեղ ներկայացնենք այդ աղյուսակների մեջ հետաքրքրող մասը Սիրիուսի ու Բետելգեյզեի հե-

---

7 Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 139:

8 Գ. Կոստանդեան, Աստղաբանութիւն համառօտ, 1853, Զմյուռնիա, էջ 242:

Ս. Դեռնի, Տօմարական համառօտ դիտելիք, Վաղարշապատ, 1888, էջ 13—17,

10 Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909:

11 Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին. Հայկական ՍՍՌ Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, հ. 1, 1944, էջ 113:

12 F. K. Ginzel. Handbuch der Mathematischen und technischen chronologie, Leipzig. 1910—14. հ. II. էջ 521:

լիոտիկ ծագման վերաբերյալ՝ 500 թ. մ. թ. ա. մինչև մեր թվականության 300 թ. Հայաստանի տարբեր մասերի աշխարհագրական լայնությունների համար։

աշխ. լայն	500 մ. թ. ա.	300 մ. թ. ա.	100 մ. թ. ա.	100 թ.	300 թ.
			Սիրիուսի համար		
34	հուլ. 23,61	հուլ. 23,69	հուլ. 23,77	հուլ. 23,87	հուլ. 23,99
38	հուլ. 28,13	հուլ. 28,11	հուլ. 28,10	հուլ. 28,13	հուլ. 28,17
42	օգոս. 2,70	օգոս. 1,89	օգոս. 1,79	օգոս. 1,73	օգոս. 1,70
			Բետելգեյզեի համար		
34	հուն. 25,27	հուն. 25,71	հուն. 26,15	հուն. 26,60	հուն. 27,06
38	հուն. 29,04	հուն. 29,35	հուն. 29,66	հուն. 29,99	հուն. 30,34
42	հուլ. 3,44	հուլ. 3,59	հուլ. 3,75	հուլ. 3,92	հուլ. 4,13

Աղյուսակից երևում է, որ երկու աստղի համար էլ տեղի ունի նույն օրինաչափությունը։ Այն է՝ նշված ժամանակաշրջանում որքան վաղ մոմենտի համար ենք վերցնում, այնքան շուտ է տեղի ունենում հելիոտիկ ծագումը և ընդհակառակը։ Եթե ինտերպոլիացիա կատարենք, ապա նորից կստանանք, որ Բետելգեյզեի հելիոտիկ ծագումը նաև 1000 թ. մ. թ. ա. բոլորովին էլ օգոստոս ամսին չի ընկնի։ Ավելին, նա միշտ ավելի շուտ կծագի, քան Սիրիուսը։ Նման եզրակացության են բերում նաև Օրիոնի մյուս պայծառ աստղերի նկատմամբ կատարած հաշվումները։ Այսինքն՝ հելիոտիկ ծագումը Օրիոնի համար ավելի շուտ է տեղի ունենում (մոտ մեկ ամիս), քան Մեծ շան համաստեղությանը։ Դորձին չի օգնի նաև հին տոմարի միջին տարվա և արևադարձային տարվա տևողությունների տարբերությունը, քանի որ երկու աստղի համար էլ նույն օրերի քանակով պետք է ծագման ժամանակը փոխել (ի դեպ հազար տարվա համար այն հավասար է 7,5 օրվա)։

Այսպիսով, Լ. Սեմյոնովի հաշվումները սխալ են և օգոստոսի 11-ը հելիոտիկ ծագումներով հիմնավորելը, որպես հնթանոսական հայկական թվականի ամանոր, միանգամայն անհիմն։ Իր մինչ այժմ հայտնի և ոչ մի երկում Հովհաննես Սարկավագը օգոստոսի 11-ը տարեմուտ մտցնելը երբեք չի կապել այս կամ այն աստղի կամ համաստեղության հելիոտիկ ծագման հետ։ Ավելին, նա չի պնդում այն մասին, թե հայոց առաջին տարվա տարեմուտը եղել է օգոստոսի 11-ը։ Նա վկայաբերում է այլ, մասնավորապես 5-րդ դարում կատարված, գրառումները և միայն ցանկանում վերականգնել այդ ժամանակների օրացույցը, ենթադրելով, որ հետագա դարերում բավական մեծ սխալներ են թույլ տրվել հայկական տոմարում։ Այդ հարցը մանրամասն ուսումնասիրման է ենթարկել Ա. Արրահամյանը, իրեն իսկ Հովհաննես Սարկավագի կողմից՝ հարցը պարզաբանող մեկնությունների հիման վրա[13]։ Փաստեր, որոնք նախորդ ուսումնասիրողներին հայտնի չէին։ Եզրակացությունն այն է, որ «...ուսումնասիրելով հին հայկական մատենագրությունը (Հովհաննես Սարկավագը) աշխատեց պարզել, թե հինգերորդ դարում Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտներն ինչ ամանորով են առաջնորդվել։ Նա պարզեց, որ 428 թվականին հայկական ամանորը եղել է օգոստոսի 11-ին, այդ էլ նա ընդունեց ամանոր»[14]։

Ճիշտ է վաղ դարերի հայկական օրացույցի մասին մեզ հասած տեղեկությունները շատ քիչ են, որպեսզի մենք կարողանանք վերականգնել ամբողջ տոմարը, այդ թվում և ամանորները, սակայն որոշ հիմքեր կան, որոնք, ի դեպ, անտեսել են այս հարցը նախկինում ուսումնասիրող հեղինակները, և որ այդ հիմքերը վստահություն են ներշնչում ենթադրություններ անելու հայկական ամանորների հարցի վերաբերյալ։

Նախ մի քանի խոսք ընդհանրապես հայոց Մեծ և Փոքր թվականներ մտցնելու մասին։ Հայտնի է, որ հայերը դեռևս մեր թվականությունից առաջ ունեցել են օրացույց։ Հավանաբար, այն սկզբում եղել է լուսնային, իսկ հետագայում անցել են ավելի կատարելագործված՝ արեգակնային օրացույցի։ Թե ե՞րբ է սկիզբ առել այդ օրացույցը և ի՞նչպիսին է այն եղել սկզբնական շրջանում ու ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել հետագայում, դրանց մասին կան միայն

13 Ա. Արրահամյան, Հովհաննես Իմաստասիրի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 54—85։

14 Ա. Արրահամյան, Հայ գրի ու գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 269։

կցկտուր տեղեկություններ։ Մասնավորապես Սովսես Խորենացու կողմից նշում կա այն մասին, որ հայոց Արտաշես թագավորի օրոք (189—160 թ. մ. թ. ա.) այդ հարցի վրա լուրջ ուշադրություն է դարձվել և որոշ կարգավորումներ մտցվել։ Հին հայկական արեգակնային օրացույցի մասին կարելի է որոշակիորեն ասել այն, որ այն շարժական տոմար է (տարին կազմված 12 ամսից 30-ական օրից և 5 հավելյալ օրերից. իսկ ամիսներն ու ամսաթվերը ունեցել են հատուկ անուններ)։ Հայկական օրացույցի շարժական լինելը որոշ դժվարություններ է առաջ բերում տարեսկզբի տեղափոխման պատճառով։ Այստեղ ոչ միայն ամիսների ու տարվա եղանակների որոշակի համապատասխանությունները մշտապես խախտվում են, այլև խախտվում են, իր ժամանակին բավական կարևորություն ունեցող. եկեղեցական տոների ու ծիսակատարությունների ժամանակները։ Այս հանգամանքը ավելի անելանելի դրություն է ստեղծում քրիստոնեությունը Հայաստանում մուտք գործելուց հետո։ Բանը նրանումն է, որ քրիստոնեական եկեղեցին պահանջում էր, որ եկեղեցական տոները կատարվեին միայն և միայն որոշակի օրեր։ Մասնավորապես զատկի տոնը որոշվել էր տոնել գարնանային գիշերահավասարի օրից հետո եկող լիալուսնի հաջորդ կիրակի օրը։ Հայաստանում ժամանակի չափման նման մեթոդի առկայությունը և նրան ներկայացվող պահանջները բոլորովին այլ բաներ էին, որի պատճառով էլ հաճախ խառնաշփոթություն էր առաջանում։ Ինչպես քրիստոնեական մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում վերոհիշյալ տոները ժամանակին կատարելու համար օգտագործում են 19-ամյա, 95-ամյա, իսկ 353 թվականից՝ Անդրիաս Բյուզանդացու կողմից կազմած 200-ամյա աղյուսակները։

Բյուզանդացու աղյուսակները վերջանալուց հետո նոր շփոթություններ են առաջանում։ Հայկական շարժական տոմարի համար՝ հռոմեական անշարժին զուգահեռ Անանիա Շիրակացին (7-րդ դ.) Անաստաս կաթողիկոսի առաջարկությամբ կազմում է 532-ամյա աղյուսակ, որի առաջին տարին սկսվում է 552 թվականի հուլիսի 11-ից։ Այդ օրից էլ սկիզբ է առնում հետագայում այսպես կոչվող հայոց Մեծ թվականը։ Ընդ որում հայոց Մեծ թվականը հաշվվել է ոչ թե Անդրիաս Բյուզանդացու կազմած աղյուսակի վերջանալուց որոշ ժամանակ անց, այլ անմիջականորեն՝ առանց որևէ ընդմիջման[15]։

1084 թվականից՝ 532-ամյա երկրորդ աղյուսակի կազմելու օրից մտցվում է հայոց Փոքր (կամ ինչպես հաճախ ասում են՝ Սարկավագաղիր) թվականը։ Այս աղյուսակի վերջանալուց հետո տարբեր հեղինակների կողմից կազմվում են երրորդ 532-ամյա պարբերությունն ընդգրկող աղյուսակներ։ Մասնավորապես 1616 թվականին Ազարիա Ջուղայեցու կողմից կազմված նոր աղյուսակի սկսվելու տարուց հիմք է դրվում Ջուղայեցիների, կամ ինչպես երբեմն օգտագործում են նաև ձեռագրերում՝ Նոր կամ Փոքր թվականը։

Ինչպես տեսնում ենք, հայկական տոմարում որպես կանոն դարաշրջանները (թվականները) հաշվել են ըստ 532-ամյա աղյուսակների։ Մասնավորապես այդպիսի սկզբնավորություն է ունեցել նաև հայոց Մեծ թվականը։ Այնպես որ այստեղ չպետք է փնտրել ինչ-որ «մեծ իրադարձություն» աստղագիտական երևույթներում կամ քաղաքական կյանքում։ Հայոց Մեծ թվականի մուծումը նույնպես բնական է և հիմնավորված, ինչպես Փոքր թվականը և Ջուղայեցիների թվականը. մանավանդ, որ նման բան կատարվել է նաև այլ ժողովուրդների տոմարներում։

Ամփոփելով հայոց Մեծ և Փոքր թվականների տարեսկզբի հարցի շուրջը մինչ այժմ եղած բազմաթիվ (հաճախ իրար հակասող) կարծիքների ուսումնասիրությունը, գալիս ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հայոց Մեծ թվականն սկսվել է Անդրիաս Բյուզանդացու 200-ամյա տոմարական աղյուսակների վերջանալուց անմիջապես հետո։ Այն հաշվվել է որպես 532-ամյա առաջին աղյուսակի սկիզբ, չկապվելով որևէ քաղաքական կամ աստղագիտական կարևոր իրադարձության հետ։

2. Հովհաննես Սարկավագը տարեսկիզբը փետրվարի վերջից (1084 թ.) տեղափոխել է օգոստոսի 11-ը երկու պատճառով՝ ա) վերացնելու այն սխալը, որն առաջացել էր հայոց Մեծ թվականը շարժական տոմար լինելու պատճառով. բ) նմանեցնելու տոմարն այն տոմարի հետ, որով առաջնորդվել են Մեսրոպ Մաշտոցն ու նրա աշակերտները հինգերորդ դարում։

3. Հայոց Փոքր թվականը մտցվել է 532-ամյա երկրորդ աղյուսակի կիրառման կապակցությամբ։ (532-ամյա երրորդ աղյուսակի կապակցությամբ նոր թվականներ են առաջարկել Ազարիա Ջուղայեցին և ուրիշները)։

---

15 Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, 1, 1941, էջ 29։

4. Միանգամայն սխալ է հայկական անշարժ տոմարի տարեսկզբի՝ օգոստոսի 11-ի կապելը Հայկ նահապետի Բելի հետ ճակատամարտի հետ։

Այժմ անցնենք Հայոց Մեծ թվականը հուլիսի 11-ից սկսելու հարցին։ Հայոց տոմարը շարժական լինելով յուրաքանչյուր չորս տարում մեկ օրով տարեսկիզբը շուտ էր սկսվում։ Անդրիաս Բյուզանդացու աղյուսակների վերջանալու տարում հայկական տարեսկիզբը հուլիսի 11-ն էր։ Իսկ որ ամսին և ամսաթվին էր Անդրիասի աղյուսակների գործադրման սկիզբը։ Այդ աղյուսակները սկսվել են 353 թվականից և կազմված են եղել 200 տարվա համար։ Այդքան տարում եղել է 50 նահանջ տարի, որի պատճառով էլ հայոց ամանորը 50 օրով անշարժ տոմարների նկատմամբ շուտ է սկսվել։ Հուլիսի 11-ից 50 օր առաջ գնալով, ստացվում է օգոստոսի 29-ը։ Նման արդյունքի ենք հասնում նաև Հայոց Փոքր թվականի հաշվումների համար։ Եվ իրոք. ինչպես Հովհաննես Սարկավագն է գրում, զանազան խառնաշփոթություններից (մասնավորապես այն, որ հուլյան մի տարում հայկական երկու ամանոր է տեղի ունեցել) խույս տալու համար որպես տարեսկիզբ ընտրել է հինգերորդ դարի (428 թվականի) օգտագործած տարեմուտը, և որ այն տեղի է ունեցել օգոստոսի 11-ին։ Բայց 353-ից 428 թվականը եղել է 19 նահանջ տարի։ 19 օր օգոստոսի 11-ից առաջ գնալով, նորից կստանանք օգոստոսի 29-ը։

Երկու դեպքում էլ ստացվեց օգոստոսի 29-ը։ Այն պատահակա՞ն է, արդյոք, և ի՞նչ թիվ է հիշեցնում։

Հարցի առաջին մասին հեշտ է պատասխանել։ Եթե 428 թվականից մինչև 552 թվականը հաշվենք նահանջ տարիների քանակը, կստացվի 31։ Այդքան օր հուլիսի 11-ից առաջ գնալով, կստանանք օգոստոսի 11-ը։ Այսպիսով, փաստորեն հինգերորդ դարում օգտագործված տոմարի և Հայոց Մեծ թվականի առաջին 532-ամյա աղյուսակների կազմելու տոմարների միջև ոչ մի խզում չկա, այլ դրանք մեկը մյուսի անմիջական շարունակությունն են։ Եվ եթե հետագայում հայկական տոմարում մեկ լրացուցիչ տարի չառաջանար, երևի Սարկավագը չդիմեր Նոր տարեսկզբի որոնմանը, որը մտցնելով, ի դեպ, նա ոչինչ չի շահել։ Ընդհակառակը՝ տարեսկզբի այդպիսի կամայական տեղափոխությունը դժվարացրել է այդ երկու թվականները միացնող տարվա (1084 թ.) ժամանակագրական կապակցությունը։ Եվ քանի որ տարեսկզբի այդ թռիչքը հայոց Մեծ թվականով օգտվող հայության առաջ արդարացնելն այնքան էլ հեշտ չէր՝ (մանավանդ որ նրանք ցրված էին աշխարհով մեկ և միաժամանակ այդպիսի անցումը հնարավոր չէր իրագործել) հիմնական պատճառներից մեկն է եղել Փոքր թվականի հետագայում ոչ լայն ընդունելություն գտնելուն, չնայած այն անշարժ լինելով հանդերձ մեծ առավելություն ուներ Հայոց Մեծ թվականի նկատմամբ։ Հայերի մեծ մասը, ինչպես հայտնի է, շարունակեց առաջնորդվել Հայոց Մեծ թվականով՝ Սարկավագադիրը հիմնականում թողնելով եկեղեցական օգտագործման։

Այժմ անցնենք հարցի երկրորդ մասի պարզաբանմանը։ Ի՞նչ թիվ է իրենից ներկայացնում օգոստոսի 29-ը։

Տարեսկիզբը՝ օգոստոսի 29-ը, ինչպես հայտնի է, ուներ այդ ժամանակ լայն ընդունելություն գտած Դիոկղետիանոսի էրան։ Վերջինս գործում էր մեր թվականության 284 թվականի օգոստոսի 29-ից (այսինքն՝ 248 տարով շուտ, քան Քրիստոսի ծննդյան էրայի ընդունումը, որը գործածության մեջ է մտել 532 թվականից միայն)։ Դիոկղետիանոսի էրան փաստորեն ներկայացնում էր եգիպտական օրացույցի, այսպես կոչված, ալեքսանդրյան թվահաշվի շարունակությունը։ Եվ իրոք. Հենց Եգիպտոսում գործ էին ածում շարժական տոմար։ Տարին կազմված էր 365 օրից։ Արևադարձային տարուց այն տարբերվում էր մոտ քառորդ օրով, որը կուտակվելով 1460 տարում կազմում էր մեկ լրիվ տարի։ 1461-րդ տարին, որպես ավելացած տարի, հաշվի մեջ չէր մտնում։

Հռոմեական Օգոստոս կայսրի օրոք Եգիպտոսում ևս անցնում են անշարժ տոմարի։ Նահանջ տարիների հաշվման սկզբունքով այն նման էր հուլյան տոմարին, այն տարբերությամբ, որ ոչ թե 4-ի վրա առանց մնացորդի բաժանվող տարեթվերն էին համարվում նահանջ, այլ յուրաքանչյուր այդպիսի քառամյակի 3-րդ տարին։ Անշարժ տոմարի անցնելու ժամանակ շարժական տոմարի տարեսկիզբը ընկել էր հուլյան տոմարով օգոստոսի 29-ին։ Անշարժ դարձնելու հետևանքով այդ տարեսկիզբը մնաց անփոփոխ նաև հետագա ժամանակներում[16]։

Մինչև Դիոկղետիանոսը, ինչպես նաև նրա օրոք, տարեթվերը հաշվում էին ըստ թագավորությունների։ «Նրա իշխանության օրոք Հռոմը կորցնում է իր առաջատար դիրքը կայսրությու-

---

[16] Ի դեպ եգիպտական և հուլյան տոմարներով նահանջ տարիները քառամյակի 3-րդ կամ 4-րդ տարին ընդունելու պատճառով հաճախ եգիպտական տարեմուտը հուլյան տոմարով օգոստոսի 29-ի փոխարեն ընկնում է օգոստոսի 30-ին։

նում։ Կայսերական գահանիստը դառնում է Բյուզանդիայի մոտ, Փոքր Ասիայից հյուսիս-արևմուտք գտնվող Նիկոմեդիա նոր քաղաքը։ Դիոկղետիանոսի ժառանգորդները վարում էին պառակտողական պատերազմներ։ Նրանցից ոչ մեկը չէր ներկայացնում հռոմեական տրոհված իշխանության իսկական հրամանատարը։ Տարեթվերի հաշվումը ըստ նրանցից որևէ մեկի թագավորության՝ գառավ անհնար։ Այդ պատճառով տարիները շարունակում էին ըստ սովորության հաշվել Դիոկղետիանոսի թագադրության ժամանակից, ըստ «Դիոկղետիանոսի էրայի»։ Տարեթվերի այդպիսի հաշվումը պահպանվեց երկար ժամանակ, նույնիսկ Արևմտյան հռոմեական կայսրության անկումից հետո էլ»[17]։

Դիոկղետիանոսի էրան մինչև այժմ էլ պահպանվում է եգիպտական քրիստոնյաների (կոպտերի) ու տարեշների կողմից։

Անկասկած է այն, որ Անդրիաս Բյուզանդացին իր աղյուսակները պետք է կազմած լիներ ըստ այդ ժամանակի ընդունված տոմարի՝ Դիոկղետիանոսի էրայի (մանավանդ որ դրանք կազմվել են ոչ միայն հայերի, այլ բոլոր քրիստոնյա ժողովուրդների համար)։ Բայց քանի որ վերջինիս տարեսկիզբը օգոստոսի 29-ն էր, աղյուսակներն էլ, որոնք, իհարկե, տարեսկզբից պետք է մտցված լինեն, սկսված են եղել օգոստոսի 29-ին։ Ստացվում է, որ և 552 թվականին մտցված հայոց Մեծ թվականի առաջին տարվա և 1084 թվականին մտցված Փոքր թվականի համար ընդունված տարեսկզբի ամսանորը սերտ կերպով կապվում են տարեթվերի հաշվման ալեքսանդրյան թվահաշվի հետ։

Որ հայոց տոմարը շարժական է եղել ոչ միայն առաջ, այլև Անդրիաս Բյուզանդացու տոմարական աղյուսակների կիրառման տարիներին, երևում է տարեսկզբի վերևում նշված տեղափոխությունից։ Այսինքն՝ հայկական օրացույցը եգիպտական անշարժ օրացույցի հետ չի համընկնում։ Այն չի հանդիսանում նաև եգիպտական նախկին շարժական տոմարի շարունակությունը։ Եվ իրոք եգիպտական շարժական տոմարի տարեսկիզբը՝ թոթի մեկը, մեր թվականությունից առաջ 26 թվականին ընկնում էր օգոստոսի 29-ին։ Այդ մոմենտից մինչև 552 թվականը ժամանակամիջոցը (557 տարի) բաժանելով 4-ի վրա և այդքան օրով օգոստոսի 29-ից ետ գնալով՝ կստանանք ապրիլի 7-ը, որը ավելի քան երեք ամսով տարբերվում է հայոց Մեծ թվականի տարեսկզբից։ Այսինքն՝ մեր շարժական տոմարը երբեք չի համընկել հին եգիպտական օրացույցի հետ։

Վերոհիշյալ դատողություններից հետևում է, որ հայոց Մեծ թվականի համար որպես տարեսկիզբ հուլիսի 11-ը ընդունելն այն բանի պատճառով է տեղի ունեցել, որ Անդրիաս Բյուզանդացու կազմած 200-ամյա աղյուսակները գործածության մեջ դնելիս (հեշտության պատճառով) որպես տարեսկիզբ ընդունվել է այդ աղյուսակների գործադրման առաջին օրը (թոթի 1-ը), որը հուլյան տոմարով ընկնում է օգոստոսի 29-ին։ Դրանից հետո օրացույցը շարունակվել է հին հայկական տոմարի սկզբունքով՝ որպես շարժական տոմար և 552 թվականին այդ տոմարի տարեմուտը ընկել է հուլիսի 11-ին։

Նման ծագում ունի նաև հինգերորդ դարի մի շարք հեղինակների կողմից տարեսկզբի համար նշված օգոստոսի 11-ը, որը է Հովհաննես Սարկավագը հետագայում ընդունեց տարեմուտ նաև իր անշարժ տոմարի (հայոց Փոքր թվականի) համար։ Այսինքն՝ Բյուզանդացու աղյուսակների գործադրման առաջին տարում (353 թ.) տարեսկիզբն ընդունվել է օգոստոսի 29-ը, իսկ հետագայում, քանի որ հայոց տարին պարունակում էր 365 օր, տարեսկիզբը հետզհետե տեղափոխվել է և 428 թվականին ընկել օգոստոսի 11-ին։

Б. Е. Туманян

О НАЧАЛЕ БОЛЬШОГО И МАЛОГО АРМЯНСКОГО ЛЕТОСЧИСЛЕНИЯ

Резюме

В статье рассматриваются существующие мнения авторов о начале года армянского календаря. Эти мнения, как правило, противоречивы и часто необоснованны. В частности, в работе доказывается, что начало года, введенное Ованесом Саркавагом, не связано с гелиотическим восходом Ориона.

[17] В. Шишаков. Стража времени, Москва, 1960, էջ 30.

Факты подтверждают, что в Армении, при использовании календарных таблиц Андриаса Византийского, начало года в этом календаре совпадало с началом года эры Диоклетиана (29-е августа). Впоследствии армяне продолжили свой подвижный календарь и, при введении первого 532-летнего цикла (после окончания таблиц Византийского), началом года оказалось 11-е июля 552 года.

Из-за подвижности армянского календаря происходила путаница. В частности, в одном и том же году юлианского календаря были два начала армянского года. Ованес Саркаваг, при введении нового 532-летнего цикла, с 1084 года ввел новое—Малое армянское летосчисление. Новый календарь был неподвижным. Им было установлено новое начало года (вместо конца февраля—11-е августа). Этим он хотел восстановить календарь, употребляемый Месропом Маштоцем и его учениками, в котором в 428 году год начинался с 11 августа. Нетрудно убедиться, что если в 353 году (начало действия таблиц Андриаса Византийского) началом года было принято 29-е августа (1-е Товта) и календарь оставался подвижным, то в 428 году начало года должно было переместиться на 11 августа. Таким образом, начало 1-го года Большого армянского летосчисления и армянского календаря 428 года, принятое Ованесом Саркавагом за начало неподвижного армянского календаря, тесно связано с моментом введения таблиц Андриаса Византийского и египетским календарем Александрийского исчисления.